Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԻԽ նախագահ
Ն. Խ. Սարիբեկյան

Գիտական մասի վարիչ՝ Վ.Ս.Գրիգորյան
«28» 04 2022թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 ԱԲՀ Ուսանողական Գիտական Ընկերությունը (այսուհետ՝ ՈԻԳԸ կամ Ընկերություն) ԱԲՀ ուսանողներին միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2 Ընկերությունը գործում է ԱԲՀ Կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Ընկերության կանոնադրությունը և դրա մեջ կատարվող փոփոխությունները հաստատվում են ԱԲՀ Գիտական խորհրդի կողմից՝ ուսանողական բաժնի ներկայացմամբ:

1.4 Ընկերությունը, սահմանված կարգով, կարող է ունենալ, անկյունային դրոշմ, տարբերանշան, պաշտոնաթուղթ:

1.5 Ընկերությունն իր հարաբերությունները ԱԲՀ ղեկավար մարմինների հետ կարգավորում է ԱԲՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ԱԲՀ Գիտական խորհրդի համապատասխան որոշումներով:

1.6 Ընկերությունն իր նպատակների և խնդիրների լուծման, երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար համագործակցում է ԱԲՀ գիտական մասի, Ուսանողական խորհրդի, ամբիոնների և այլ ստորաբաժանումների հետ:

1.7 Ընկերության անվանումն է. հայերեն՝ Ավանդական բժշկության համալսարանի Ուսանողական Գիտական Ընկերություն, ռուսերեն՝ Студенческое Научное Общество Университета Традиционной Медицины, անգլերեն՝ Student Scientific Society of the University of Traditional Medicine of Armenia: Իսկ կրճատ անվանումները. հայերեն՝ ԱԲՀ ՈԻԳԸ, ռուսերեն՝ СНО УТМ, անգլերեն՝ SSS UTM: Ընկերության հասցեն՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 38:

II. Ընկերության նպատակն ու խնդիրները

2.1 Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

- գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,
- համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և դրա մասին ինֆորմացիայի համակարգում,
- համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին,
- գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
- ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
- այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվությանփոխանակում
- գիտական մասի վարիչի վերահսկողությամբ և ուղղորդմամբ՝ մասնակցություն դրամաշնորհային ծրագրերի դիմելու գործընթացին

III. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինը

3.1 ԱԲՀ Ուսանողական Գիտական ընկերության ղեկավար մարմինը Ուսանողական Գիտական ընկերության Խորհուրդն է, որի նիստը գումարվում է ուսումնական կիսամյակում ոչ պակաս քան երկու անգամ:

3.2 ՈւԳԸ-ի խորհրդի կազմի մեջ մտնում են ՈւԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը:

3.3 ՈւԳԸ խորհուրդը՝

- քննարկում և որոշում է ՈւԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները,միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
- առաջարկություններ է ներկայացնում ԱԲՀ Գիտական խորհրդին,
- ի գիտություն է ընդունում ՈւԳԸ նախագահի տարեկան հաշվետվությունը,
- մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը,
- հաստատում է իր աշխատակարգը,
- ստեղծում, վերակազմավորում և լուծում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈւԳԸ աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,
- որոշում է ընդունում շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,
- վավերացնում է ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը,

3.4 ԱԲՀ ՈՒԳԸ-ի աշխատանքները վերահսկվում է ԱԲՀ Գիտական մասի վարիչի կողմից: Ընկերությունն իր աշխատանքները կազմակերպում է համալսարանի Գիտական մասի վարիչի մասնակցությամբ և ղեկավարությամբ:

3.5 ԱԲՀ ՈՒԳԸ խորհրդի նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈՒԳԸ նախագահի, գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

IV. ՈՒԳԸ խորհրդի անդամները

4.1 Ուսանողական Գիտական ընկերության նախագահը հաստատվում է ԱԲՀ Գիտական խորհրդի կողմից, երեք տարի ժամանակով՝ ԱԲՀ ռեկտորի ներկայացմամբ,

4.2 ՈՒԳԸ նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ԱԲՀ Գիտական խորհրդի անդամ,

4.3 Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր:

4.4 ՈՒԳԸ նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԱԲՀ Գիտականխորհրդում:

4.5 Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈՒԳԸ խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային օղակների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

4.6 Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով ՈՒԳԸ խորհրդի աշխատակարգով:

V. Ընկերության միջոցները,ռեսուրսները և դրանց օգտագործման կարգը

5.1 Ընկերության միջոցները գոյանում են ԱԲՀ բյուջեից կատարվող մասհանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2 Ընկերությունն անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԱԲՀ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

5.3 Ընկերության միջոցներն օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5.4.Մարդկային ռեսուրսների ներգրավվում: Ուսանողության շրջանում հաղորդակցման բարելավման, ինչպես նաև աշխատանքների առավել արդյունավետ իրականացման

նպատակով՝ ուսանողական գիտական ընկերությունն իրավունք ունի իր աշխատանքներում ներգրավել նաև օգնական-ծրագրավարների (facilitator): Օգնական-ծրագրավարներն ընտրվում են ուսանողության շրջանից՝ կամավորական սկզբունքով, հաշվի առնելով տվյալ ուսանողի գիտական, մասնագիտական և կազմակերպչական հմտությունները: Օգնական-ծրագրավարներ նշանակվում են բոլոր խմբերից, առավելագույնը՝ 2 հոգի յուրաքանչյուր խմբից. նրանց թեկնածությունն առաջարկվում է ՈԻԳԸ նախագահի կամ գիտական մասի վարիչի կողմից, հաստատվում է գիտական մասի վարիչի կողմից: Օգնական-ծրագրավարի պատասխանատվությունները ներառում են՝ ՈԻԳԸ նախագահի համակարգման ներքո մասնակցություն գիտական մասի և ՈԻԳԸ-ի կողմից իրականացվող ծրագրերին, ուսանողության շրջանում դրանց լուսաբանում, ՈԻԳԸ ծրագրերի շրջանակներում կազմակերպչական գործունեության իրականացում, գիտական և գիտապրակտիկ ծրագրերին և միջոցառումներին ուսանողների ներգրավվածության խթանում, օժանդակում ՈԻԳԸ աշխատանքներին: Օգնական-ծրագրավարը չի համարվում ՈԻԳԸ անդամ, սակայն աշխատանքների հաջող իրականացման դեպքում կարող է դիտարկվել ապագայում այդպիսին դառնալու հավանականությունը: Առանձին դեպքերում՝ սահմանված կարգով, օգնական-ծրագրավարի լիազորությունների շրջանակներում կատարված գիտական աշխատանքը կարող է համարվել ուսանողական ինքնուրույն աշխատանք և հաշվի առնվել գնահատման վարկանիշային համակարգի կոնտեքստում:

VI. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

6.1 Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ԱԲՀ Գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2 Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և միջոցները պատկանումեն Ավանդական Բժշկության Համալսարանին: